ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. հոկտեմբերի 8-ին Երևանում, ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունում տեղի ունեցավ հայագիտական երեք պարբերականների՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» (Երևան), „Revue des Etudes Arméniennes" (Փարիզ) և «Հայկական հայագիտական հանդեսի» (Բեյրութ) խմբագիրների խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին ժամանակակից հայագիտության մի շարք խնդիրներ, երեք հանդեսների փոխադարձ կապի և օգնության հարցեր։

«Revue»-ի խմբագիր Ժան Պիեռ-Մահեն, խոսելով հանդեսի հիմնական նպատակների մասին, մասնավորապես նշեց, որ խմբագրությունը աշխատում է որքան հնարավոր է Արևմուտքի ընթերցողներին լայնորեն ծանոթացնել հայագիտական այն նոր գրականության հետ, որ լույս է տեսնում Սովետական Միությունում հայերեն ու ռուսերեն լեզուներով։

— Այս հարցում,— ասաց նա,— մեզ հատկապես զգալի օգնություն կարող է ցույց տալ Հայաստանի ակադեմիայի «Հանդեսի» խմբագրությունը։ Մենք կտպագրենք գրախոսություններ և գիտական ինֆորմացիաներ Հայաստանի հայագիտական հրատարակությունների և գիտական համապատասխան հիմնարկների աշխատանքի մասին։ Ցանկալի է որ մեր հանդեսում ավելի հաճախ հանդես գան սովետահայ հայագետները։

Բեյրութի «Հայկազյան հայագիտական հանդեսի» խմբագիր Երվանդ Քասունին, որն իր թեկնածուական դիսերտացիան պաշտպանել է Երևանի պետական համալսարանում, խոսեց այն դժվարությունների մասին, որոնք կանգնած են հանդեսի խմբագրության առաջ։

— Սակայն, չնայած դրան,— նշեց նա,— մենք արդեն հրատարակել ենք 6 հատոր և գործադրելով ամեն ջանք, աշխատում ենք ապահովել հանդեսի հետագա հրատարակությունը։ Մեր խմբագրությունը կարիք ունի գիտական հոդվածների։ Ուրախ կլինենք, եթե Հայաստանի հայագետները իրենց ուսումնասիրություններով և գիտական կոնսուլտացիաներով մասնակցեն մեր հանդեսի հրատարակության գործին։ Միաժամանակ ցանկալի կլինի, որ «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրվեն սփյուռքահայ հայագետների հոդվածները։ Ցանկալի է նաև, որ «Հանդեսում» ավելի մանրամասնորեն լուսաբանվի սփյուռքահայության հասարակական-մշակութային կյանքը։

Հայագիտության մի շարք հաջողությունների մասին խոսեց «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագիր Մ. Գ. Ներսիսյանը։

— Անելիքները, սակայն, դեռ շատ են,— ասաց նա։— Ըստ երևույթին, հարկավոր է անհրաժեշտ ուշադրություն դարձնել հայ և մյուս ժողովուրդների անցյալի պատմական, քաղաքական ու մշակութային կապերի և փոխադարձ ազդեցությունների լուսաբանման պրոբլեմի վրա։ Կարևոր է, որպեսզի հայտնաբերվեն ու հրապարակվեն արտասահմանյան արխիվներում ու ձեռագրերում գտնվող այն նյութերը, որոնք վերաբերում են հայ և հարևան ժողովուրդների պատմությանը և մշակույթին։ Կարելի է սկիզբ դնել համատեղ ուսումնասիրություններին։ Կարծում ենք, որ արտասահմանյան հայագիտական պարբերականներում կարիք կա, որ ավելի շատ էջեր նվիրվեն Սովետական Հայաստանում հրապարակվող հայագիտական ուսումնասիրություններին։

Խմբագիրները եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է ուժեղացնել հայագիտական հանդեսների գիտական կապերը և փոխադարձ ինֆորմացիան, ինչպես նաև հաշվի առնել խորհրդակցությունում արտահայտված ցանկությունները։

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ